նոցունց և նստին ի վերայ տախտակի զոնէ Արասցուք կոիւս, միայն թէ պարտեսցուք եւ առցուք զիշխանութիւն՝ զհոգոց իւրեանց կորուստ։ Եւ զՂալֆան ևս երեկոյիս բերեալ ի ժամ. և տեսեալ յետ ժամու միւսոցն որ մերայինք ասացաւ, գնացաք իւրաքանչիւր տեղի զի մի լիցի կռիւ։ Եւ Սահակն կացեալ անդ. և յորժամ Ոսկեան տէրտէրն ելանէ, և նա ընդ նմին ելանէ եւ ի դուռն հասանէ եւ կալեալ ծեծվին զմեծ ժամս, մինչև հասեալ նոցունց և զՍահակն կու ծեծեն, Ղալֆան՝ զտղայ Սահակին, Պարմախսուզն՝ զԹօփալ Դանէլն։ Աղաղակն հասեալ ի մեզ որք կայաք նստեալ ընդ Տէր Յովանէսիւն, զի հիւանդ էր, և հասին ի դուռն եկեղեցոյն. և ոմն զՊարմախսուզն ըմբռնեալ և ոմն զԹըլթըլն թէ Զարեաց մակարդ էք, վասն է՞ր ոչ ելէք յեկեղեցոյն և ի տունս ձեր ոչ գնացիք. և ոմանք ի նոցունց փախէին։ Եւ յըմբռնելն զմեծ ժամս աղաղակէին թէ Զե՞մք, մեք չե՞մք. եւ զՂալֆան եւ Տէր Խաչատուրն խաղաղարար կերպարանեալ լռեցուցանեն, զի յիւրեանք մի մօտեսցին։ Եւ ի մթանալն առնեն զՏէր Ոսկանն և կապեն ի գլուխն եւ ճակատն չէմպէր մի եւ առաջի անկեալ երթան ի սուպաշին. Դու հաքիմ ես եւ զչարս եւ զէշխիաս չես որոներ, զի ունիմք ե՞ Զ էշխիայ յեկեղեցիս մերահա՛ և մինն զայս երէցս յինչ ցաւ զիպոյց. առաւօտուն ե՛կ եւ ըմբռնեա՛ զնոքա։ Եւ ի դառնալն գայ Թըլթըլն և ասէ Սահակին թէ Առաւօտուն չլինի չլինի թէ ի դուրս ելանես, զի զքեզ կու փնտռեն, բարեկամ կերպարանելով նմա։ Եւ նա գիտացեալ զխորամանկութիւն նոցա՝ ելեալ երթայ առ սուպաշին և պատմեալ մի ըստ միոջէ. եւ սուպաշին ասէ. Նոքա դեռ ևս ելին յինէն և ասացին՝ Առաւօտուն եկ զի զնոսա տացուք ի ձեռս քո։

Ելի (8 Նոյ.). առաւօտուս գնացեալ մեր ի ժամ